ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/28

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1470-19 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 17.01.2019թ. թիվ ԴԴ-3-Ե-191 գրության հիման վրա, 05.02.2019թ. թիվ 27/26-3/1470-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/28 ընթացակարգի շրջանակներում 08.02.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ դատական դեպարտամենտը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.01.2019թ. թիվ ԴԴ-3-Ե-191 գրությամբ հայտնել է, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում 05.12.2018թ. թիվ 7 որոշմամբ ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել պայմանագրի կատարման ապահովման բնօրինակը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/28 ընթացակարգի շրջանակներում 08.02.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **ՍՑ-ԱՄ-2019/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ԱՄ-2019/28 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կազմակերպվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից աճուրդի 7-րդ չափաբաժնի մասով, իսկ 05.12.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից նույն չափաբաժնի մասով:

3. 17.12.2018թ. «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովման բնօրինակը:

4. «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագրի ապահովումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1470-19 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 17.01.2019թ. թիվ ԴԴ-3-Ե-191 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. *որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,*

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի

ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.4-րդ և 8.5-րդ ենթակետերի համաձայն՝

8.4 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

8.5 Եթե ընտրված մասնակիցը ՀՀ ռեզիդենտ է, ապա պայմանագրի նախագիծը հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, իսկ պայմանագրի (կանխավճարի) ապահովման բնօրինակը ներկայացնում է պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ.

ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կազմակերպվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-18/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից աճուրդի 7-րդ չափաբաժնի մասով, իսկ 05.12.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից նույն չափաբաժնի մասով:

17.12.2018թ. «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովման բնօրինակը:

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագրի ապահովումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով չի ներկայացրել պայմանագրի ապահովման բնօրինակը, դրանով իսկ հրաժարվելով պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.02.2019թ. թիվ 27/26-3/1470-19 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ